

## ԿԱՐԾԻՔ

### Անի Սարգսի Հարությունյանի

#### ԿԵՆԴԱՆՈՒՆՆԵՐՈՎ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԳԼԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ (ՀԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ)

Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ճանաչողական լեզվաբանությունը հիմնական շեշտը դնում է լեզվի վրա՝ որպես տեղեկատվության կազմավորման, մշակման, ստացման, պահպանման և փոխանցման գործիքի: Լեզվի ձևական կառույցներն ուսումնասիրվում են որպես գիտելիքի կազմակերպման, դասակարգման սկզբունքների, մշակման մեխանիզմների արտացոլումներ: Ճանաչողական լեզվաբանների ուշադրության կենտրոնում են հետևյալ խնդիրները՝ որքանով է լեզուն որոշում և կարգավորում մտածողությունը, և արդյոք մտածական կառույցները, ինչպես լեզուները, տարբեր են զանազան մշակույթներում, թե բոլոր լեզուների հիմքում միևնույն մտածական կառույցներն են, և լեզվական տարբերությունները պայմանավորված են մշակութային առանձնահատկություններով:

Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում հասկացությունների ուսումնասիրությունը խոսույթի տարբեր ձևերում, քանի որ դրանք առկայացվում են և՛ լեզվական միավորների (բառերի և դարձվածքների), և՛ ոճական պատկերավոր միավորների՝ մասնավորապես՝ փոխաբերության միջոցով: Մտածողության և լեզվի կապի ժամանակակից ուսումնասիրություններում մեծ տեղ է հատկացվում փոխաբերությունների ճանաչողական դերին: Փոխաբերությունը մարդու

մտածողության հիմքերը, ինչպես նաև աշխարհի լեզվական պատկերի ստեղծման գործընթացները հասկանալու բանալի է: Այսպիսով, Անի Հարությունյանի «Կենդանուններով փոխաբերությունների լեզվաճանաչողական առանձնահատկությունները անգլաամերիկյան մամուլում (հայերենի զուգադրությամբ)» թեմայով Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսությունը, որը ներառում է երկու կարևոր խոսույթներում՝ քաղաքական և տնտեսական, «կենդանական աշխարհ» աղբյուր տիրույթի փոխաբերական արտապատկերումների մանրակրկիտ վերլուծություն, արդիական է, քանի որ նպաստում է ճանաչողական գործընթացների մասին գիտելիքի ընդլայնմանը:

Ներկայացված ատենախոսության նպատակն է ուսումնասիրել կենդանուններով փոխաբերությունների լեզվաճանաչողական առանձնահատկությունները քաղաքական և տնտեսական խոսույթում՝ անգլաամերիկյան և հայկական մամուլի նյութի հիման վրա:

Հետազոտության նորույթը ապահովում է ոչ միայն վերոնշյալ խոսույթներում կենդանուններով ճանաչողական փոխաբերությունների համակողմանի ուսումնասիրությունը՝ սեռատեսականիչ կաղապարների, պատկերասխեմատիկ կառուցվածքների, արտապատկերումների և հավելյալ արտապատկերումների վերլուծությամբ, այլև քաղաքական և տնտեսական խոսույթներում վերոնշյալ վերլուծության արդյունքների զուգադրումը և հայերեն նյութի ընդգրկումը, ինչը հնարավորություն է ընձեռել վերհանել փոխաբերության ճանաչողական, գնահատողական, մտաշահարկային ներուժն ու առանձնահատկությունները ինչպես մի լեզվի շրջանակում, այնպես էլ տարբեր լեզվամշակույթների:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից :

Ներածությունը ներկայացնում է հետազոտության արդիականությունը, նպատակը և խնդիրները, նորոյթը, տեսական և գործնական արժեքը, պաշտպանության առաջադրված դրույթներն ու ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլխում, որը վերնագրված է «Փոխաբերության ճանաչողական հայեցակերպը» ատենախոսը քննարկում է փոխաբերությանը առնչվող տարբեր տեսությունները՝ շեշտը դնելով ճանաչողական լեզվաբանության շրջանակում առաջ քաշված տեսությունների և դասակարգումների վրա՝ ապահովելով հաջորդ երկու գլուխներում իրականացված լեզվանյութի վերլուծության համար անհրաժեշտ տեսական հիմք: Գովելի է, որ ատենախոսը ուսումնասիրել է թեմային առնչվող հայերեն, ռուսերեն և անգլերեն գիտական գրականություն և պատշաճ կերպով ներկայացրել տարբեր տեսակետներ՝ տալով նաև իր դիտարկումները: Պետք է նշել նաև, որ Ա.Հարությունյանը ամփոփ ներկայացրել է նաև քաղաքական և տնտեսական խոսույթին առնչվող գիտական տեսակետները ատենախոսության համապատասխան գլուխների սկզբում:

Ատենախոսության երկրորդ և երրորդ գլուխներում ատենախոսը, հիմնվելով 4000 հոդվածներից քաղված փաստացի նյութի վրա, մանրամասն ուսումնասիրել է ընտրված երկու խոսույթներում առկա փոխաբերական կաղապարները մեկ աղբյուր տիրույթի՝ «կենդանական աշխարհի» դիտանկյունից: Գովելի է մասնավորապես այն փաստը, որ Ա.Հարությունյանը փորձել է վերհանել քաղաքական և տնտեսական խոսույթներին բնորոշ փոխաբերական կաղապարների հիմքում ընկած բազմապիսի պատկեր-սխեմաները, ինչը թույլ է տալիս ավելի լիարժեք պատկեր ստանալու, մի կողմից, ուսումնասիրվող նյութի շրջանակում, մյուս կողմից, ավելի լայն իմաստով, ճանաչողական գործընթացների յուրահատկությունները ըմբռնելու առումով: Հետաքրքրական է նաև ատենախոսի հղումը կոնկրետ փոխաբերական կաղապարներից դեպի ավելի վերացական՝ սեռանիշ կաղապարներ, ինչը դարձյալ նպաստում է ոչ միայն կոնկրետ ատենախոսության թեմայի համապարփակ ներկայացմանը, այլև ընդհանուր ճանաչողական գործընթացների մասին գիտելիքի

ընդլայնմանը: Լեզվանյութը վերլուծելիս ատենախոսը նաև զուգահեռներ է անցկացնում արդեն քննարկված փոխաբերական կաղապարների հետ և մեկ խոսույթի շրջանակում, և երկու խոսույթների միջև, ինչը ապահովում է շարադրանքի տրամաբանական կապակցվածությունը: Ատենախոսության ևս մեկ դրական կողմ է Ա.Հարությունյանի կողմից իրականացված վերլուծության արդյունքների ամփոփ ներկայացումը աղյուսակներում, որտեղ ակնառու երևում է ուսումնասիրվող լեզուների և խոսույթների տարբերությունները, ինչպես նաև գծագրերում ու դիագրամներում, որոնք տալիս են քանակական պատկերը, ինչը ևս կարևոր տեղեկատվություն է հստակ պատկեր ստանալու համար:

Ատենախոսության եզրակացության մեջ հստակ ներկայացված են վերլուծության արդյունքում կատարված եզրահանգումները և առանձին քաղաքական ու տնտեսական խոսույթների առաձևահատկությունների և դրանց նմանությունների ու տարբերությունների, լեզվամշակութային յուրահատկությունների վերաբերյալ:

Բնական է, որ ցանկացած հետազոտություն կարելի է դիտարկել նաև բարելավման տեսանկյունից: Այսպես՝

1. Ատենախոսության երկրորդ գլխի 69-րդ էջում ատենախոսը զուգահեռ է անցկացնում «Ընտրությունը ձիարշավ է» և «Քաղաքական գործունեությունը որս/ձկնորսություն է» փոխաբերական կաղապարների միջև դրանց հիմքում ընկած պատկեր սխեմաների տեսանկյունից, նշելով, որ դրանք «խարսխվում են սկզբնակետ-ուղի-նպատակակետ պատկեր սխեմայի վրա, որը համատեղում է պարունակություն, գործընթաց, ցիկլային զարգացում, ձգողականություն, ուժ պատկեր սխեմաները», սակայն պարզաբանում է միայն ուժ պատկեր սխեմայի դերը:
2. Երրորդ գլխի 152-րդ էջում ատենախոսը գրում է, որ «հայ մամուլում գների բարձրացումը հիմնականում ներկայացվում է *աճել* բայի փոխաբերական իմաստով, մինչդեռ անգլաամերիկյան մումուլում՝ *թռչել, ճախրել* բայերով»՝ եզրակացնելով, որ ճանաչողական կաղապարները տարբերվում են,

հայերենում ունենք «Տնտեսությունը բույս է» կաղապարը, իսկ անգլերենում «Տնտեսությունը կենդանի է»: Այստեղ անհրաժեշտ էր նշել, որ անգլերենում հավասարապես գործում է նաև «Տնտեսությունը բույս է» կաղապարը, քանի որ հաճախ են օգտագործվում “the prices grow” կամ “the growth of prices” արտահայտությունները, պարզապես դա դուրս է մնացել սույն ատենախոսության ուսումնասիրության շրջանակից: Նմանապես, 166-րդ էջում նշվում է, որ հայերենում առկա է «Գնաճը հիվանդություն է» կաղապարը, մինչդեռ անգլերենում «Գնաճը կենդանի է», սակայն նշենք, որ անգլերենում ևս առկայացված է «Գնաճը հիվանդություն է» հասկացության փոխաբերությունը:

3. Երրորդ գլխի 157-րդ էջում գնաճին առնչվող կողմնորոշման փոխաբերությունները քննարկելիս «Կյանքը վեր է, Մահը վար» փոխաբերության դրսևորումներում բերված են «Արթուն լինելը վեր է, իսկ քնած լինելը վար» փոխաբերության օրինակներ՝ “As the Inflation Stirs, Investors Squirm”, “In February, he described inflation as a sleeping tiger that has been “stirred from its slumber”:

Ինչպես կարելի է տեսնել վերը նշվածից, դիտողությունները կասկածի տակ չեն դնում հետազոտության արժեքը, գիտականությունը և կատարված եզրահանգումները: Ատենախոսությունը գրված է համապատասխան գիտական ոճով և բավարարում է առաջադրվող պահանջներին, և կարելի է այն երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Ատենախոսության սեղմագրում արտացոլված են ատենախոսության մեջ ներկայացված վերլուծության արդյունքերը և եզրակացությունները, իսկ ատենախոսության հիմնական դրույթները համապատասխանաբար արտացոլված են հրապարակումներում:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Անի Սարգսի Հարությունյանը արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանին և միջնորդում ենք Երևանի պետական համալսարանում գործող Օտար լեզուների 009 մասնագիտական խորհրդին նրան շնորհելու այդ աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի

Լեզվաբանության և հաղորդակցման

տեսության ամբիոնի վարիչ,

բ.գ.թ., դոցենտ




Լիլիթ Բարայան

Հաստատում եմ Լ. Բարայանի ստորագրությունը

ԲՊՀ-ի գիտքարտուղար՝

10.10.2022թ.



Հ. Փիլավջյան